

Սույն փաստաթուղթը միայն տեղեկատվական գործիք է, և հաստատությունները դրա բովանդակության համար որևէ պատասխանատվություն չեն կրում:

**►B** Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2005/32/ԵՀ հրահանգը կիրարկող՝  
Էլեկտրական և էլեկտրոնային կենցաղային և գրասենյակային սարքավորումների՝  
սպասման ու անջատված ռեժիմներում էլեկտրականության սպառման  
էկոնախագծմանը ներկայացվող պահանջների մասին ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008  
թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 1275/2008 ԿԱՆՈՆԱԿԱՐԳ (ԵՀ)

(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

(ՊՏ L 339, 18.12.08, էջ 45)

Փոփոխված՝

		Պաշտոնական տեղեկագիր		
		թիվ	էջ	ամսաթիվ
<b>►M1</b>	Հանձնաժողովի 2009 թվականի ապրիլի 6-ի L 93 թիվ 278/2009 (ԵՀ) կանոնակարգով		3	7.4.2009
<b>►M2</b>	Հանձնաժողովի 2009 թվականի հուլիսի 22-ի L 191 թիվ 642/2009 (ԵՀ) կանոնակարգով		42	23.7.2009

**▼B**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը,

հաշվի առնելով Էներգասպառող արտադրատեսակների էկոնախագծմանը ներկայացվող պահանջները սահմանելու համար շրջանակ սահմանելու մասին և Խորհրդի 92/42/ԵՏՀ հրահանգը և Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 96/57/ԵՀ և 2000/55/ԵՀ հրահանգները փոփոխող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2005 թվականի հուլիսի

6-ի 2005/32/ԵՀ հրահանգը (1), և, մասնավորապես, դրա 15(1) հոդվածը, Էկոնախագծման հարցերի շուրջ խորհրդակցական համաժողովում քննարկումներից հետո,

Քանի որ

- 1) համաձայն 2005/32/ԵՀ հրահանգի՝ Էկոնախագծմանը ներկայացվող պահանջները պետք է սահմանվեն Հանձնաժողովի կողմից էներգասպառող այն արտադրատեսակների համար, որոնք ունեն վաճառքի և շրջանառության էական ծավալներ, զգալի ազդեցություն են գործում շրջակա միջավայրի վրա և մեծ հնարավորություն ունեն շրջակա միջավայրի վրա ազդեցությունը նվազեցնելու առումով՝ չհանգեցնելով չափազանց մեծ ծախսերի,
- 2) 2005/32/ԵՀ հրահանգի 16(2) հոդվածի երկրորդ պարբերությամբ նախատեսվում է, որ 19(3) հոդվածում նշված ընթացակարգին և 15(2) հոդվածով սահմանված չափորոշիչներին համապատասխան, և Էկոնախագծման հարցերի վերաբերյալ խորհրդատվական համաժողովում քննարկումներից հետո, Հանձնաժողովը, անհրաժեշտության դեպքում, ներմուծում է մի խումբ արտադրատեսակների կողմից սպասման ռեժիմում էլեկտրականության կորստի նվազեցումն ապահովող առանձին կիրարկող ակտ,
- 3) Հանձնաժողովն իրականացրել է նախապատրաստական ուսումնասիրություն, որի ընթացքում վերլուծության էին ենթարկվել սպասման ռեժիմում և անջատված ռեժիմում էլեկտրականության կորստի տեխնիկական, բնապահպանական և տնտեսական հայեցակետերը: Ուսումնասիրությունը մշակվել է ԵՄ և երրորդ երկրների շահառուների ու շահագրգիռ կողմերի հետ համատեղ, և արդյունքները մատչելի են դարձվել հանրությանը:
- 4) նախապատրաստական ուսումնասիրության մեջ նշվել է, որ Համայնքում վաճառվող էլեկտրական և էլեկտրոնային կենցաղային և գրասենյակային սարքավորումների մեծ մասի դեպքում տեղի են ունենում սպասման ռեժիմում էներգասպառման պրոցեսներ և անջատված ռեժիմում՝ էլեկտրականության կորուստ, մինչդեռ սպասման ռեժիմում էներգասպառման պրոցեսների և անջատված ռեժիմում էլեկտրականության կորստի

հետ կապված էլեկտրականության տարեկան սպառումը Համայնքում 2005 թվականին գնահատվել է 47 ՏՎտժ, ինչը համարժեք է 19 մլն տոննա CO<sub>2</sub>-ի արտանետման: հատուկ միջոցներ չձեռնարկելու դեպքում, կանխատեսվում է, որ սպառումը 2020 թվականին կաճի մինչև 49 ՏՎտժ: Համաձայն եզրակացության՝ սպասման ռեժիմում էներգասպառման պրոցեսները և անջատված ռեժիմում էլեկտրականության կորուստը կարող է զգալիորեն կրճատվել,

- 5) սպասման ռեժիմում էներգասպառման պրոցեսների և անջատված ռեժիմում էլեկտրականության կորուստի հետ կապված էլեկտրականության սպառման բարելավումը պետք է իրականացվի՝ կիրառելով առկա տնտեսապես շահավետ չարտոնագրված տեխնոլոգիաներ, ինչը հանգեցնում է սարքավորումների գնման և շահագործման ընդհանուր ծախսերի նվազեցմանը,
- 6) պետք է սահմանվեն էլեկտրական և էլեկտրոնային կենցաղային և գրասենյակային սարքավորումների սպասման ու անջատված ռեժիմներում էներգասպառման առումով էկոնոմիկայի ներկայացվող պահանջներ Համայնքի ամբողջ տարածքում սպասման ու անջատված ռեժիմների էկոնոմիկայի ներկայացվող պահանջները ներդաշնակեցնելու, ներքին շուկայի գործունեությանն և ազդեցություն կրած արտադրատեսակների բնապահպանական ցուցանիշների բարելավմանն աջակցելու նպատակով,
- 7) էկոնոմիկայի ներկայացվող պահանջները չպետք է բացասական ներգործություն ունենան արտադրատեսակի ֆունկցիոնալ հնարավորության վրա և բացասաբար ազդեն առողջության, անվտանգության և շրջակա միջավայրի վրա, Մասնավորապես, ակտիվ շահագործման փուլում էներգախնայողությունից ստացված օգուտները պետք է էապես գերազանցեն սպասման ռեժիմում էներգասպառման պրոցեսներ և անջատված ռեժիմում էլեկտրականության կորուստներ ունեցող սարքավորումների արտադրության փուլում շրջակա միջավայրի վրա հնարավոր լրացուցիչ ազդեցության վնասները,

- 8) սույն Կանոնակարգի կիրառությունը պետք է սահմանափակվի կենցաղային միջավայրում օգտագործվող կենցաղային ու գրասենյակային սարքավորումներին համապատասխանող արտադրատեսակներով, որոնք տեղեկատվական տեխնոլոգիաների սարքավորումների դեպքում, 55022:2006-ում սահմանվածի համաձայն, համապատասխանում են ԵՆ Բ դասի սարքավորումներին: Շրջանակը պետք է սահմանվի այնպես, որ ապահովվի համապատասխանությունը նշված պահանջներին այն սարքավորումների դեպքում, որոնք դեռևս առկա չեն շուկայում, սակայն ունեն էներգասպառման այնպիսի պրոցեսներ, ինչպիսին հատուկ են սույն Կանոնակարգում հստակորեն նշված արտադրատեսակներին: Անհրաժեշտության դեպքում, սույն Կանոնակարգի փոփոխությունը կարող է լրացվել արտադրատեսակների ցանկով,
- 9) համաձայն 2005/32/ԵՀ հրահանգի՝ սույն Կանոնակարգով չկարգավորվող աշխատանքային ռեժիմները, ինչպես օրինակ համակարգիչների ACPI S3 ռեժիմը, պետք է հաշվի առնվի կոնկրետ արտադրատեսակներին ուղղված կիրարկող ակտերում,
- 10) որպես կանոն, 2005/32/ԵՀ հրահանգի համաձայն կոնկրետ արտադրատեսակներին ուղղված կիրարկող ակտերում սահմանված սպասման ու անջատված ռեժիմներին ներկայացվող պահանջները չպետք է լինեն ավելի քիչ հավակնոտ, քան սույն Կանոնակարգում սահմանվածները,
- 11) էներգիայի անհարկի կորուստները կանխելու համար արտադրատեսակները, որևէ ֆունկցիա չկատարելու պարագայում, լավագույն դեպքում, պետք է անցնեն սպառման «0-Վատո» վիճակի: Համաձայն 2005/32/ԵՀ հրահանգի՝ համապատասխան կիրարկող ակտում պետք է քննարկվեն տեխնիկական իրագործելիությունն ու և նպատակահարմարությունն՝ ըստ առանձին արտադրատեսակների,
- 12) էկոնախագծմանը ներկայացվող պահանջների ուժի մեջ մտնելու երկփուլ գործընթացը

պետք է արտադրողների համար ապահովի սպասման ռեժիմում էներգասպառման պրոցեսների և անջատված ռեժիմում էլեկտրականության կորստի առումով արտադրատեսակների վերանախագծման համար համապատասխան ժամանակ ունենալու հնարավորություն: Փուլերի իրականացման ժամանակահատվածը պետք է սահմանվի այնպես, որ հնարավոր լինի խուսափել շուկայի վրա բացասական ազդեցություններից՝ կապված սարքավորումների էներգասպառման պրոցեսների հետ և հաշվի առնվեն ծախսերի հետևանքները արտադրողների, մասնավորապես՝ փոքր և միջին ձեռնարկությունների վրա՝ ապահովելով քաղաքականությամբ հետապնդվող նպատակների ժամանակին իրականացումը, էներգասպառման չափումները պետք է կատարվեն՝ հիմնվելով լայն տարածում ունեցող ժամանակակից մեթոդների վրա: Արտադրողները կարող են կիրառել 2005/32/ԵՀ հրահանգի 9-րդ հոդվածին համապատասխան սահմանված ներդաշնակեցված ստանդարտներ,

- 13) սույն Կանոնակարգի շնորհիվ շուկայում պետք է ավելանան այն տեխնոլոգիաները, որոնց միջոցով բարելավվում է սպասման ռեժիմում էներգասպառման պրոցեսների և անջատված ռեժիմում էլեկտրականության կորստի հետ կապված էներգաարդյունավետությունը՝ 2020 թվականին էներգախնայողությունը, աշխատանքի սովորական սցենարի համեմատ, հասցնելով 35 ՏՎտժ,
- 14) համաձայն 2005/32/ԵՀ հրահանգի 8(2) հոդվածի՝ սույն Կանոնակարգով պետք է սահմանվի, որ համապատասխանության գնահատման կիրառելի ընթացակարգերը 2005/32/ԵՀ հրահանգի IV հավելվածով սահմանված նախագծման աշխատանքների հսկման ներքին համակարգն է և V հավելվածով սահմանված կառավարման համակարգը,
- 15) համապատասխանության ստուգումների գործընթացը հեշտացնելու համար արտադրողներից պետք է պահանջվի, որպեսզի նրանք 2005/32/ԵՀ հրահանգի IV և V հավելվածներում նշված տեխնիկական փաստաթղթերում տեղեկատվություն տրամադրեն սպասման/ անջատված ռեժիմների սահմանումներին համաձայն շահագործման պայմանների և համապատասխան էներգասպառման մակարդակների

վերաբերյալ,

16) պետք է հենանիշեր սահմանվեն սպասման և անջատված ռեժիմներում ցածր էներգասպառմամբ ներկայումս գոյություն ունեցող տեխնոլոգիաների համար: Հենանիշերն օգնում են ապահովել տեղեկությունների հանրային մատչելիությունն ու հասանելիությունը՝ հատկապես փոքր և միջին ձեռնարկությունների և չափազանց փոքր ընկերությունների համար. դա էլ ավելի է հեշտացնում լավագույն նախագծային տեխնոլոգիաների ինտեգրումը սպասման և անջատված ռեժիմներում էներգասպառումը նվազեցնելու համար,

17) սույն Կանոնակարգով նախատեսված միջոցները համապատասխանում են 2005/32/ԵՀ հրահանգի 19(1) հոդվածով ստեղծված Կոմիտեի եզրակացությանը,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

### *Հոդված 1*

#### **Կարգավորման առարկան և գործողության ոլորտը**

Սույն Կանոնակարգով սահմանվում են սպասման և անջատված ռեժիմներում էլեկտրականության սպառման հետ կապված էկոնախագծմանը ներկայացվող պահանջներ: Սույն Կանոնակարգը կիրառվում է էլեկտրական և էլեկտրոնային կենցաղային և գրասենյակային սարքավորումների նկատմամբ: ▼M1

Սույն Կանոնակարգը չի կիրառվում ցածրավոլտ՝ էներգամատակարարման արտաքին աղբյուրներով՝ շուկայահանված էլեկտրական և էլեկտրոնային կենցաղային ու գրասենյակային սարքերի նկատմամբ:

▼B

## Հոդված 2

### Սահմանումները

Սույն Կանոնակարգի նպատակներով՝ կիրառվում են 2005/32/ԵՀ հրահանգով սահմանված սահմանումները: Կիրառվում են նաև հետևյալ սահմանումները՝

1. Էլեկտրական և էլեկտրոնային կենցաղային և գրասենյակային սարքավորումներ՝ (այսուհետ՝ սարքավորումներ)՝ էներգասպառող ցանկացած արտադրատեսակ, որը.

ա) առկա է վաճառքում որպես առանձին ֆունկցիոնալ միավոր և նախատեսված է վերջնական սպառողի համար,

բ) ներառված է հավելված I-ում նշված էներգասպառող արտադրատեսակների ցանկում,

գ) նախատեսված ձևով աշխատելու համար ծախսում է էլեկտրասնուցման ցանցից ստացվող էներգիա, և

դ) նախատեսված է 250 Վ կամ ավելի ցածր անվանական լարմամբ աշխատելու համար.

նաև այն դեպքում, երբ դրանք շուկայահանված են ոչ կենցաղային և ոչ գրասենյակային նպատակներով օգտագործման համար,

2. սպասման ռեժիմ (ներ)՝ վիճակ, երբ սարքավորումը միացված է էլեկտրասնուցման ցանցին, նախատեսված ձևով աշխատելու համար ծախսում է էլեկտրասնուցման ցանցից ստացվող էներգիա և կատարում է միայն հետևյալ ֆունկցիաները, որոնք կարող են շարունակվել անորոշ ժամանակ՝

– վերաակտիվացման ֆունկցիա, կամ վերաակտիվացման ֆունկցիա և միայն միացված վերաակտիվացման ֆունկցիայի ցուցանշում, և (կամ)

– տեղեկությունների կամ կարգավիճակի դիսփլեյ,

3. վերաակտիվացման ֆունկցիա՝ ֆունկցիա, որը հեշտացնում է այլ ռեժիմների ակտիվացումը՝ ներառյալ ակտիվ ռեժիմը, հեռակառավարման անջատիչի՝ ներառյալ հեռակառավարման վահանակի, ներքին տեղեկությունների ցուցիչի, լրացուցիչ ֆունկցիաները, այդ թվում՝ հիմնական ֆունկցիայի կատարումը միացնող ժամաչափի միջոցով,

4. տեղեկությունների կամ կարգավիճակի դիսփիլեյ՝ շարունակական ֆունկցիա, որը դիսփիլեյի վրա տեղեկություններ է տրամադրում սարքավորման մասին կամ ցույց է տալիս դրա կարգավիճակը, ինչպես նաև ժամը,

5. ակտիվ ռեժիմ (ներ)՝ վիճակ, երբ սարքավորումը միացված է էլեկտրասնուցման ցանցին և ակտիվացվել է նախատեսված ծառայության համար անհրաժեշտ՝ սարքավորման հիմնական ֆունկցիայից(ներից) առնվազն մեկը,

6. անջատված ռեժիմ՝ վիճակ, երբ սարքավորումը միացված է էլեկտրասնուցման ցանցին և չի ապահովում որևէ ֆունկցիայի կատարում. անջատված ռեժիմ է համարվում նաև հետևյալը.

ա) վիճակներ, որոնք ապահովում են անջատված վիճակի միայն ցուցանշում,

բ) վիճակներ, որոնք ապահովում են միայն էլեկտրամագնիսական համատեղելիությունն ապահովելու համար նախատեսված ֆունկցիոնալ հնարավորություններ՝ համաձայն Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2004/108/ԵՀ հրահանգի (2), 7. տեղեկատվական տեխնոլոգիաների սարքավորումներ՝ ցանկացած սարքավորում, որի առաջնային ֆունկցիաները ներառում են տվյալների և հեռահաղորդակցային հաղորդագրությունների մուտքագրումը, պահեստավորումը, առբերումը, փոխանցումը, մշակումը, փոխարկումը կամ կառավարումը կամ այս ֆունկցիաների համակցությունը, և որը կարող է ունենալ սովորաբար տեղեկությունների փոխանցման համար օգտագործվող մեկ կամ ավելի տերմինալի սարքամիացքներ (պորտեր),

8. կենցաղային միջավայր՝ միջավայր, որտեղ հեռուստառադիոհեռարձակող ընդունիչները կարող են օգտագործվել նշված սարքերից 10 մ հեռավորության վրա, ▼M1

9. ցածրավոլտ՝ սնման արտաքին աղբյուր՝ 6 վոլտից պակաս ելքային լարմամբ նշումով և 550 միլիամպերը գերազանցող կամ դրան հավասար ելքային հոսանքով նշումով սնման արտաքին աղբյուր:

▼B



### *Հոդված 3*

#### **Էկոնախագծմանը ներկայացվող պահանջները**

Սպասման և անջատված ռեժիմներում էլեկտրականության սպառման հետ կապված էկոնախագծմանը ներկայացվող պահանջները սահմանված են II հավելվածում:

### *Հոդված 4*

#### **Համապատասխանության գնահատումը**

2005/32/ԵՀ հրահանգի 8(2) հոդվածում նշված համապատասխանության գնահատման ընթացակարգը 2005/32/ԵՀ հրահանգի IV հավելվածով սահմանված նախագծման աշխատանքների հսկման ներքին համակարգն է կամ 2005/32/ԵՀ հրահանգի V հավելվածով սահմանված կառավարման համակարգը:

### *Հոդված 5*

#### **Ստուգման ընթացակարգը շուկայի վերահսկողության նպատակներով**

Վերահսկողության մասով ստուգումներն իրականացվում են III հավելվածում սահմանված ստուգման ընթացակարգի համաձայն:

### *Հոդված 6*

#### **Հենանիշերը**

IV հավելվածով սահմանվում են ներկայումս շուկայում առկա լավագույն արտադրողականություն ունեցող արտադրատեսակների և տեխնոլոգիաների հենանիշերը:

## Հոդված 7

### **Վերանայումը**

Սույն Կանոնակարգն ուժի մեջ մտնելուց հետո ոչ ուշ, քան 6 տարի հետո Հանձնաժողովը վերանայում է այն՝ հաշվի առնելով տեխնոլոգիական առաջընթացը և այդ վերանայման արդյունքները ներկայացնում էսորհրդակցական համաժողով:

## Հոդված 8

### **Ուժի մեջ մտնելը**

Սույն Կանոնակարգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում իր հրատարակման 20-րդ օրը:

II հավելվածի 1-ին կետը կիրառվում է առաջին պարբերությունում նշված ամսաթվից մեկ տարի հետո:

II հավելվածի 2-ին կետը կիրառվում է առաջին պարբերությունում նշված ամսաթվից չորս տարի հետո:

Սույն Կանոնակարգը ամբողջությամբ պարտադիր է և անմիջականորեն կիրառելի բոլոր անդամ պետություններում:

**Սույն Կանոնակարգով նախատեսված էներգասպառող արտադրատեսակների ցանկը**

1. Կենցաղային տեխնիկա

Լվացքի մեքենաներ

Հազուստ չորացնող սարքեր

Սպասք լվացող մեքենաներ

Խոհարարական տեխնիկա՝

Էլեկտրական ջեռոցներ

Էլեկտրական սալօջախներ

Միկրոալիքային վառարաններ

Տոստերներ

Գազօջախներ

Աղացներ, սրճեփ մեքենաներ և սարքավորումներ տարաներ կամ փաթեթներ բացելու կամ կնքելու համար

Էլեկտրական դանակներ

Այլ խոհարարական տեխնիկա և մթերքի մշակման, մաքրման կամ հազուստի պահպանման այլ սարքեր

Մազերի կտրման, չորացման, ատամների մաքրման, սափրման, մերսման և մարմնի խնամքի համար նախատեսված այլ սարքավորումներ

Կշեռքներ

2. Հիմնականում կենցաղային միջավայրում օգտագործելու համար նախատեսված տեղեկատվական տեխնոլոգիաների սարքավորումներ

3. Սպառողական տեխնիկա

Ռադիոընդունիչներ

Տեսախցիկներ

Տեսաձայնագրիչներ

Բարձր ճշգրտությամբ ձայնագրիչներ

Ձայնի ուժեղացուցիչներ

Տնային կինոթատրոնի համակարգեր

Երաժշտական գործիքներ

Եվ այլ սարքավորումներ՝ նախատեսված ձայնի կամ պատկերի ձայնագրման կամ վերարտադրման համար՝ ներառյալ ոչ հեռահաղորդակցության միջոցով ձայնի կամ պատկերի բաշխման համար ազդանշանները կամ այլ տեխնոլոգիաները, սակայն բացառելով հեռուստատեսային համակարգերը՝ Հանձնաժողովի թիվ 642/2009 կանոնակարգի (ԵՀ) համաձայն4. Խաղալիքներ, ժամանցային և սպորտային սարքավորումներ

Էլեկտրական գնացքներ կամ ավտոմրցարշավային հավաքածու

Ձեռքի էլեկտրոնային խաղերի կցուրդ

Էլեկտրական կամ էլեկտրոնային բաղադրիչներ պարունակող սպորտային սարքավորումներ

Այլ խաղալիքներ, ժամանցային և սպորտային սարքավորումներ

**Էկոդիզայնի պահանջները**

1. Սույն Կանոնակարգի ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարի անց՝

ա) Էներգասպառումը անջատված ռեժիմում.

Սարքավորումների էներգասպառումը անջատված ռեժիմի ցանկացած վիճակում չպետք է գերազանցի 1,00 Վտ-ը:

բ) Էներգասպառումը սպասման ռեժիմում (ներում):

Ցանկացած վիճակում սարքավորումների էներգասպառումը միայն վերաակտիվացման ֆունկցիայի ապահովման պարագայում կամ վերաակտիվացման ֆունկցիայի և միայն միացված վերաակտիվացման ֆունկցիայի ցուցանշման ապահովման պարագայում չպետք է գերազանցի 1,00 Վտ-ը:

Ցանկացած վիճակում սարքավորումների էներգասպառումը միայն տեղեկությունների կամ կարգավիճակի դիսփլեյի միացման պարագայում կամ միայն վերաակտիվացման ֆունկցիայի և տեղեկությունների կամ կարգավիճակի դիսփլեյի համակցության ապահովման պարագայում չպետք է գերազանցի 2,00 Վտ-ը:

գ) Անջատված ռեժիմի և (կամ) սպասման ռեժիմի առկայությունը

Սարքավորումը պետք է, բացառությամբ այն դեպքերի, երբ դա չի համապատասխանում դրա նպատակային օգտագործմանը, ապահովի անջատված ռեժիմ և (կամ) սպասման ռեժիմ, և (կամ) մեկ ուրիշ վիճակ, որի դեպքում չեն գերացանցվում անջատված ռեժիմում և (կամ) սպասման ռեժիմում էներգասպառմանը ներկայացվող կիրառելի պահանջները, երբ սարքավորումները միացված են էլեկտրասնուցման ցանցին:

2. Սույն Կանոնակարգի ուժի մեջ մտնելուց հետո չորս տարի անց՝

ա) Էներգասպառումը անջատված ռեժիմում.

Սարքավորումների էներգասպառումը անջատված ռեժիմի ցանկացած վիճակում չպետք է գերազանցի 0.50 Վտ-ը:

բ) Էներգասպառումը սպասման ռեժիմում (ներում)՝

Ցանկացած վիճակում սարքավորումների էներգասպառումը միայն վերաակտիվացման ֆունկցիայի ապահովման պարագայում կամ վերաակտիվացման ֆունկցիայի և միայն

միացված վերաակտիվացման ֆունկցիայի ցուցանշման ապահովման պարագայում չպետք է գերազանցի 0.50 Վտ-ը:

Ցանկացած վիճակում սարքավորումների էներգասպառումը միայն տեղեկությունների կամ կարգավիճակի դիսփլեյի միացման պարագայում կամ միայն վերաակտիվացման ֆունկցիայի և տեղեկությունների կամ կարգավիճակի դիսփլեյի համակցության ապահովման պարագայում չպետք է գերազանցի 1.00 Վտ-ը:

գ) Անջատված ռեժիմի և (կամ) սպասման ռեժիմի առկայությունը

Սարքավորումը պետք է, բացառությամբ այն դեպքերի, երբ դա չի համապատասխանում դրա նպատակային օգտագործմանը, ապահովի անջատված ռեժիմ և (կամ) սպասման ռեժիմ, և (կամ) մեկ ուրիշ վիճակ, որի դեպքում չեն գերացանցվում անջատված ռեժիմում և (կամ) սպասման ռեժիմում էներգասպառմանը ներկայացվող կիրառելի պահանջները, երբ սարքավորումը միացված է էլեկտրասնուցման ցանցին:

դ) Էներգասպառման կառավարումը

Երբ սարքավորումը չի ապահովում հիմնական ֆունկցիայի կատարումը, կամ երբ այլ էներգասպառող արտադրատեսակ(ներ) կախված չէ(չեն) դրա ֆունկցիայից, ապա սարքավորումը պետք է, բացառությամբ այն դեպքերի, երբ դա չի համապատասխանում նպատակային օգտագործմանը, ապահովի էներգասպառման կառավարման ֆունկցիայի հնարավորություն կամ նմանատիպ ֆունկցիա, որի միջոցով, իր նպատակային օգտագործմանը համապատասխանող հնարավոր ամենակարճ ժամանակահատվածից հետո սարքավորումն, ավտոմատ կերպով, անցնում է՝

– սպասման ռեժիմի կամ

– անջատված ռեժիմի կամ

– մեկ ուրիշ վիճակի, որի դեպքում չեն գերազանցվում էներգասպառմանը ներկայացվող կիրառելի պահանջները անջատված ռեժիմում և (կամ) սպասման ռեժիմում, երբ սարքավորումը միացված է էլեկտրասնուցման ցանցին: Էներգասպառման կառավարման ֆունկցիան պետք է ակտիվացվի նախքան սարքավորման առաքումը:

3. Չափումները

1(ա), 1(բ), 2(ա) և 2(բ) կետերում նշված էներգասպառման ծավալը որոշվում է չափման հուսալի, ճշգրիտ ու վերարտադրելի ընթացակարգով, որը հիմնվում է լայն տարածում ունեցող ժամանակակից մեթոդների վրա:

0,50 Վտ կամ ավելի հզորության չափումները պետք է կատարվեն 2%-ից պակաս կամ դրան համարժեք սխալանքով՝ ապահովելով վստահելիության 95% մակարդակ: 0,50 Վտ-ից պակաս հզորության չափումները պետք է կատարվեն 0,01 Վտ-ից պակաս կամ դրան համարժեք սխալանքով՝ ապահովելով վստահելիության 95% մակարդակ:

#### 4. Արտադրողների կողմից տրամադրվելիք տեղեկություններ

4-րդ հոդվածի համաձայն՝ համապատասխանության հավաստման նպատակներով տեխնիկական փաստաթղթերը պետք է պարունակեն հետևյալ տարրերը.

ա) սպասման և (կամ) անջատված յուրաքանչյուր ռեժիմի համար՝

– Վտ-ով արտահայտված և հարյուրերորդականի մակարդակով կլորացված էներգասպառման տվյալները

– կիրառված չափման մեթոդը,

– սարքի ռեժիմի ընտրության կամ ծրագրման կարգի նկարագիրը,

– գործողությունների հաջորդականությունը՝ անցնելու համար այնպիսի ռեժիմի, երբ սարքավորումն ավտոմատ կերպով անցնում է մեկ ռեժիմից մյուսին,

– սարքավորման աշխատանքի հետ կապված ցանկացած նշում,

բ) չափումների փորձաստուգման պարամետրերը՝

– շրջակա միջավայրի ջերմաստիճանը,

– վոլտով արտահայտված փորձնական լարումը և հերցով արտահայտված հաճախականությունը,

– էլեկտրամատակարարման համակարգի ընդհանուր ոչ գծային աղավաղումները,

– էլեկտրական փորձաստուգման համար օգտագործված չափման սարքավորումների, դրանց տեղակայման և սխեմաների մասին տեղեկությունները և փաստաթղթերը,

գ) կիրառելիության դեպքում՝ 1(գ) կետում, կամ 2(գ) և (կամ) 2(դ) կետերում սահմանված պահանջներին համապատասխանությունը գնահատելու համար պահանջվող

սարքավորումների բնութագրերը՝ ներառյալ սպասման կամ անջատված ռեժիմին անցնելու կամ մեկ ուրիշ վիճակի ավտոմատ կերպով անցնելու համար պահանջվող ժամանակը, որի դեպքում չեն գերազանցվում անջատված ռեժիմում և (կամ) սպասման ռեժիմում էներգասպառմանը ներկայացվող կիրառելի պահանջները:

Մասնավորապես, անհրաժեշտության դեպքում, պետք է տրամադրվի տեխնիկական հիմնավորում այն մասին, որ 1(գ) կետում կամ 2(գ) և (կամ) 2(դ) կետերում սահմանված պահանջները համապատասխանում են սարքավորման նպատակային օգտագործմանը:



### ՀԱՎԵԼՎԱԾ III

#### **Ստուգման ընթացակարգը**

2005/32/ԵՀ հրահանգի 3(2) հոդվածում նշված շուկայի հսկողության նպատակով ստուգումներ կատարելիս անդամ պետությունների իրավասու մարմինները, կիրառելիության դեպքում, պետք է II Հավելվածի 1(ա) և 1(բ) և կամ 2(ա) կամ 2(բ) կետերում սահմանված պահանջների համար կիրառեն ստուգումների հետևյալ ընթացակարգը.

1,00 Վտ-ից ավելի էներգասպառման պահանջների դեպքում անդամ պետությունների իրավասու մարմինները պետք է փորձաստուգման ենթարկեն մեկ առանձին արտադրական միավոր:

Կիրառելիության դեպքում՝ մոդելը համարվում է սույն Կանոնակարգի II հավելվածի 1(ա) և 1(բ) և կամ 2(ա) կամ 2(բ) կետերով սահմանված դրույթներին համապատասխանող, եթե, անջատված և սպասման ռեժիմի վիճակում դրանց արդյունքները, կիրառելիության դեպքում, չեն գերազանցում սահմանային թույլատրելի արժեքները ավելի, քան 10% տոկոսով:

Հակառակ դեպքում, փորձաստուգման են ենթարկվում ևս երեք արտադրական միավոր: Մոդելը համարվում է սույն Կանոնակարգին համապատասխանող, եթե անջատման և սպասման ռեժիմներում կատարված վերջին երեք փորձաստուգումների արդյունքների միջին տվյալը, կիրառելիության դեպքում, չի գերազանցում սահմանային թույլատրելի արժեքները ավելի, քան 10%-ով:

1,00 Վտ-ից պակաս կամ դրան համարժեք էներգասպառման պահանջների դեպքում անդամ պետությունների իրավասու մարմինները պետք է փորձաստուգման ենթարկեն մեկ առանձին արտադրական միավոր:

Կիրառելիության դեպքում, մոդելը համարվում է սույն Կանոնակարգի II հավելվածի 1(ա) և 1(բ) և կամ 2(ա) կամ 2(բ) կետերով սահմանված դրույթներին համապատասխանող, եթե, անջատված և սպասման ռեժիմի վիճակում դրանց արդյունքները, կիրառելիության դեպքում, չեն գերազանցում սահմանային թույլատրելի արժեքները ավելի, քան 0,10 Վտ-ով:

Հակառակ դեպքում, փորձաստուգման է ենթարկվում ևս երեք արտադրական միավոր: Մոդելը համարվում է սույն Կանոնակարգին համապատասխանող, եթե անջատման և սպասման ռեժիմներում կատարված վերջին երեք փորձաստուգումների արդյունքների

միջին տվյալը, կիրառելիության դեպքում, չի գերազանցում սահմանային թույլատրելի արժեքները ավելի, քան 0,10 Վտ-ով:

Հակառակ դեպքում, մոդելը համարվում է չհամապատասխանող:

## ՀԱՎԵԼՎԱԾ IV

### Հենանիշերը

2005/32/ԵՀ հրահանգի I հավելվածի 3(2) մասի իմաստով սահմանվում են հետևյալ հենանիշերը.

Անջատված ռեժիմ՝ 0 Վտ– 0,3 Վտ հզորություն՝ առաջնային մասում տեղակայված էներգասնուցման անջատիչով՝ կախված, ի թիվս այլոց, էլեկտրամագնիսական համատեղելիության հետ կապված բնութագրերից՝ համաձայն 2004/108/ԵՀ հրահանգի:Սպասման ռեժիմ. վերաակտիվացման ֆունկցիա՝ 0,1 Վտ:

Սպասման ռեժիմ. դիսփլեյ՝ պարզ դիսփլեյների և ցածր հզորությամբ ԼԱԴ–երի համար՝ 0,1 Վտ, ավելի մեծ դիսփլեյների (օրինակ՝ ժամացույցների համար) համար պահանջվում է ավելի մեծ հզորություն:

(1) ᄠS L 191, 22.07.2005ᄠ., ᄠᄠ 29:

(2) ᄠS L 390, 31.12.2004 ᄠ., ᄠᄠ 24: